

657

2-99

60/7
Σ-99

Հ Ր Ա Ն Ա Ն Ք

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1933 ԹՎԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Տարեկան հաշվետվության կազմելը, սահմանված ձևով, պարտադիր է ամեն մի կոլտնտեսության համար:

Նախքան կոլտնտեսության տարեկան հաշվետվության կազմելը պետք է ստուգել կոլտնտեսության ամբողջ գույքի դրույթունը: Այս ստուգումը պետք է կատարվի ճիշտ և ԽՍՀՄ Հող-ժողովմատի գույքի խնամարկագրային վերաբերյալ հրահանգի համաձայն:

Խնամարկագրային արդյունքների և կոլտնտեսության հաշվապահության տվյալների հիման վրա հաշվետառները անցնում են տարեկան հաշվետվության կազմելուն:

Տարեկան հաշվետվությունն ընդգրկում է կոլտնտեսության գործունեությունը 1933 թվի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Սակայն այն կոլտնտեսությունների համար, վորոնք կազմակերպվել են 1933 թվի ընթացքում, բլանկի վերնագրում ջնջել «հունվարի մեկից» բառերը և գրել այն ամիսը, յերբ կազմակերպվել է կոլտնտեսությունը:

Տարեկան հաշվետվությունը յուրաքանչյուր կոլտնտեսություն կազմում է 3 որինակից, վորից 2 որինակը ներկայացնում է ՄՏԿ-ին յիթե կոլտնտեսությունը սպասարկվում է ՄՏԿ-ի կողմից կամ Շրջողբաժնին, (յիթե կոլտնտեսությունը չի սպասարկվում ՄՏԿ-ի կողմից). վերջիններս մեկ որինակ ուղարկում են Հողժողովմատ, յերկրորդը պահում են Հողբաժնի կամ ՄՏԿ-ի գործերում, իսկ յերրորդը մնում է կոլտնտեսության գործերում:

Տարեկան հաշվետվության գրանցումը կատարել թանաքով



առանց վորեն ջնջումների և ուղղումների: Դրա համար անհրա-
ժեշտ է սկզբում գրանցել մի որինակ, ստուգել բոլոր գրանցում-
ները, դուրս բերել հանրագումարները, ապա ստուգված և վերջ-
նականապես ուղղված որինակից արտագրել մնացած որինակները:
Տարեկան հաշվետվության բոլոր լերեք որինակներն էլ պետք է
ձիշտ ստուգված լինեն:

Տարեկան հաշվետվության բլանկի գրանցումը պետք է կա-
տարել խիստ ուշադրությամբ և զգուշությամբ: Թույլ չտալ վոչ մի
անփութ լիք վերաբերմունք, վոչ մի բաց և դատարկ սյունակ: Յե-
թե կոլտնտեսության մեջ այս կամ այն լերեվույթը կամ գործո-
ղությունը գոյություն չի ունեցել, նրա համապատասխան սյուն-
ակի մեջ գիծ քաշել: Վոչ մի սյունակ չթողնել առանց գրանց-
ման կամ գծի:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5-րդ սյունակում պետք է ցույց տրված լինի տնտեսության
գլխավոր ճյուղը, որինակ «հացահատիկի մշակում», «բանջարա-
բուծություն», «վոչխարաբուծություն», «խաղողագրուծություն»,
և այլն:

7-րդ և 8-րդ կետերում անպայման թվել կոլտնտեսության
ունեցած բոլոր ապրանքային ֆերմաները, արդյունաբերական
և տնայնագործական ձեռնարկները:

9-րդ կետում գրվում են միայն հաշվետու տարում իրոք գո-
յություն ունեցած մշտական արտադրական բրիգադները: Բրի-
գադների մշտական լինելը վորոշելու ժամանակ պետք է լինել հե-
տեվյալ հիմնական մոմենտներից 1) բրիգադը համարվում է մշտա-
կան — արտադրական, յիթե կոլտնտեսականների ընտրությունը
բրիգադի մեջ կատարվել է բրիգադի արտադրական առաջադրան-
քին, նրա չափին և բրիգադին պարագրած արտադրության մի-
ջոցների չափին խիստ համապատասխան: 2) Բրիգադի մշտական
լինելու մի այլ սկզբունքը պետք է ծառայի նրա կազմի անփո-
փոխ լինելն գոնե զուգահեռ տնտեսական աշխատանքների ամբողջ սե-
զոնի ընթացքում:

Յեթե կոլտնտեսության մեջ 1933 թվի ընթացքում չեն լե-
ղել մշտական արտադրական բրիգադներ, պետք է 9-րդ կետի 6
հարցում գրել «մշտական բրիգադներ չեն լեղել»:

2. ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՌԹՅՈՒՆԸ

Այս տեղեկությունները վերցնել կոլտնտեսության անդամ-
ների հաշվառման գրքից (ձև № 1) և ցույց տալ այն, ինչ լեղել է
առ 1-ն հունվարի 1934 թ.: 3-րդ սյունակում հաշվի առնել փաստո-
րեն աշխատունակ ամբողջ բնակչությունը, այսինքն նաև աշխա-
տանքին մասնակցող ծերերին, պատանիներին նմանապես և ար-
տազնացներին ու ժամանակավոր բացակայողներին՝ կարմիր Բա-
նակ կանչվածներին, ըստ՝ ուսումնական հիմնարկներում, տեխ-
նիկումներում, դպրոցներում և կուրսերում սովորողներին և այլն:
Արտազնացների քանակի և այն մասին թե նրանք քանի ամիս
(մարդ-ամիս) են լեղել արտազնացության մեջ, տեղեկություն վեր-
ցրել կոլտնտեսության՝ արտազնացության մեջ գտնվող անդամնե-
րի ցուցակից (ձև № 2): Յեթե կոլտնտեսականը արտազնացության
մեջ լեղել է ամսից պակաս, համարել լրիվ ամիս: Մարդ-ամիսների
թիվը արտազնացության մեջ ամբողջ տարում վորոշելու համար
գումարել արտազնացների արտազնացության մեջ լեղած ամիսների
թիվը: 4-րդ սյունակում «Աշխատունակների թիվն արտազնացու-
թյան մեջ» հաշվի առնել 1-ն հունվարի 1934 թ. արտազնացության
մեջ գտնվող բոլոր կոլտնտեսականներին:

3. ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԸ ՅԵՎ ՆՐԱ ՈԳՏԱԳՈՐ- ԾՈՒՄԸ 1933 թվին

Հողային տեսքերի մասին տեղեկություն վերցնել կոլ-
տնտեսության հողաշինարարության փաստաթղթերից: Կոլ-
տնտեսականների տնտեսողներին կից և նրանց անհատական ողտա-
գործման տակ գտնվող հողերը չգրանցել կոլտնտեսության հողու-
յին ֆոնդի մեջ: 1933 թվի հողային տարածությունների ողտա-
գործման վերաբերյալ սյունակները գրանցել փաստացի տվյալ-
ների համաձայն (գլուխորդին տրված վերջին հաշվետվությու-
նից):

4. ԱՇԽԱՏՈՐԵՐԻ ԹԻՎԸ ՏՍՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ

Գրանցել աշխուրների հաշվառման տեղեկագրի համաձայն
(ձև № 40): Աշխուրները ըստ առարձին ճյուղերի բաշխելիս, կոլ-
տնտեսականների աշխուրները հաշվել այն ճյուղի վրա, վորոնց սպա-

սարկել են այդ կոլտնտեսականները (Նրկերներ, խոհարարներ և այլն):

Բրիգադիւնների աշխուրները հաշվել այն ճյուղի վրա, վորի մեջ աշխատել են բրիգադիւնները:

Արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկների վրա պետք է հաշվել դարբնոցում, վերանորոգման արհեստանոցում, ջրաղացում և այլն կատարած աշխուրները: Վարչատնտեսական անձնակազմի մեջ հաշվել վարչության ազատված անդամներին, կոլտնտեսության հաշվալին ապաւորատը, պահեստապետներին, հավաքարարներին և վարչության պահակներին: Տարվա ընթացքում հաշված աշխուրների ընդհանուր քանակը պետք է հալատարվի աշխուրերի հաշվառման գրքի հանրագումարին (ձև № 39):

5. ՄՏԿ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գրանցել փաստորէն կատարված աշխատանքի հիման վրա ՄՏԿ-ից և կոլտնտեսության բրիգադիւրներից ընդունած աշխատանքի արձանագրութիւնների (ձև № 28) և բրիգադիւրների արտագրական պլանի կատարման տեղեկագրի համաձայն (ձև № 27): ՄՏԿ-ի կողմից չսպասարկվող կոլտնտեսութիւնները այս աղյուսակը չեն գրանցում:

6. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Անասունների քանակը առ 1-ն հունվարի 1934 թ. գրանցել ինվենտարիզացիայի տվյալներով: Առ 1-ն հունվարի 1933 թ. տեղեկութիւնները վերցվում են կամ հաշվապահական գրքից (ձև № 3), կամ կոլտնտեսութիւնի 1932 թ. տարեկան հաշվետվութիւնից: «Վորից ֆերմայում» սյունյակի մեջ գրել այն քանակը, վորն ընդգրկված է ֆերմայի մեջ՝ լեթե ֆերմայի կալմակերպման համար կոլտնտեսութիւնը պայմանագիր է կնքել Կ.Ա.Ֆ. շրջանային միավորման հետ:

7. ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՎԵՆՏԱՐԸ 1-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1934 թ

Այս աղյուսակը գրանցել գուքացուցակի համաձայն (ձև № 3) առանց ցույց տալու ինվենտարի արժեքը: «Շարժիչներ»

առժնում ազատ տեղերում գրել նրանց այն տեսակները, վորոնց անունը չկա աղյուսակի մեջ: Բաց տողում գրել այն ինվենտարը, վորի անունը չկա աղյուսակում և վորը եական նշանակութիւն ունի կոլտնտեսութիւնի համար:

8. ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑԱՆՔԸ և ԿՈՎՈՎ ԱՊԱՀՈՎԱԾ ԼԻՆԵԼԸ

Գրանցել գլուխորդի տվյալների և կոլտնտեսութիւնի վարչութիւնում լեղած նյութերի հիման վրա: Կոլտնտեսականների վրչ հանրայնացրած ցանքերն են կազմում նրանց 1932 թ. աշնանը և 1933 թ. գարնանը տնտեսողներին կից հողամասերի վրա կատարած ցանքերը: Կոլտնտեսականներին պատկանող անասունների մասին տեղեկութիւն տալ առ 1-ն հունվարի 1934 թ.

Այս աղյուսակում տրվում են տեղեկութիւններ միայն այն կոլտնտեսականների մասին, վորոնք իրենց անհատական ոգտագործման տակ ունեն ցանքեր կամ անասուններ (կամ լեղուսը միասին): Որինակ՝ լեթե կոլտնտեսութիւնում ընդամենը 50 անտեսութիւն է. նրանցից 30-ը ունի 45 կով, ապա այս աղյուսակի 3-րդ տողում պետք է գրել «30» (և վրչ թե 50), իսկ 4-րդ տողում 45:

9. ՇԵՆՔԵՐ ՅԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐ

Այս աղյուսակում հաշվի լեն առնվում միայն հանրայնացված շենքերն ու կառուցումներն, այսինքն բնակելի և տնտեսական շենքերը, իսկ կոլտնտեսականներին պատկանող շենքերը այստեղ հաշվի չառնել:

Այս աղյուսակի գրանցման համար տեղեկութիւնները վերցնել շենքերի և կառուցումների ցուցակից (ձև № 3): Չարտոված շենքերը և կառուցումները տվյալ աղյուսակի մեջ չեն գրանցվում: 1-7 տողերում հաշվի լեն առնվում հատկապես այս կամ այն տեսակի անասունների պահպանման համար հարմարեցված շենքերը: Կոլտնտեսութիւնի այն գոմերը, վորտեղ պահում են զանազան տեսակի անասուններ, չհամարել հատուկ տեսակի գոմ. լեթե այդպիսի գոմեր կան, գրանցել այսպես «ընդհանուր գոմ» վորեւ տեղում ջնջելով այն, ինչ չկա:

10. ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ՅԵՎ ՆՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ

Այս աղյուսակը հանդիսանում է հիմնականը բոլոր կողմեր-
տեսությունների համար: Պլանով նախատեսված կուլտուրաների
ցանքի տարածությունը (սյունյակ 2) վերցվում է արտադրական
պլանից: փաստացի ցանքի տարածությունը (սյունյակ 3), գը-
րանցել կուլտեսություն կողմից գյուղատնտեսության տրված վերջին
հաշվառության տվյալներով: Ծրագրային ծրագրից և տրվում
ցանքի այն տարածությունը, վորից փաստորեն բերք է հավաք-
ված (այսինքն ցանքի ընդհանուր տարածությունից դուրս չեկած
փչացած տարածությունը, և այն, վորը մնացել է առանց հավաքե-
լու): Այնպես, որ տարածությունը գրանցվում է այս սյունյակի
մեջ, իր այն չափով, ինչ չափով նա պահպանվել է մինչև 1933 թ.
գարնան սկիզբը: Կուլտեսության մեջ նոր մտած կուլտեսու-
կանների հանրայնացված ցանքերը (սյունյակ 4) գրանցվում են
ցանքերի ընդունման արձանագրությունների հիման վրա: (Սյու-
նյակ № 6) «Ընդամենը ստացվել է բերք» գրանցել մթերքների
և նյութերի շարժման հաշվառման գրքի տվյալներով (ձև № 14):
Ձևավորված հացահատիկների քանակը վերցնել կուլտեսության
գույքն ստուգող հանձնաժողովի արձանագրություններից: Սյու-
նյակներ (7 և 8) «Հանձնված է պետության հարկի կարգով» (9)
«Վերադարձված են վարկեր» և (10) «Վճարված ՄՏԿ-ի բնավար-
ձը»: գրանցել մթերքների և նյութերի շարժման գրքի հիման
վրա (ձև № 14): 11-16 սյունյակները «Հատկացված է ֆոնդերին»
գրանցել չեկամտի վերջնական բաշխման տվյալներով:

15 և 16 սյունյակներում գրել լրացուցիչ ֆոնդերի քանակը:
«Բաժանված է և չենթակա չե բաժանման անդամներին ըստ աշ-
խորհրդի» (սյունյակ 17) գրանցել բաշխման տվյալներով: Այստեղ
գրվում է ինչպես փաստացի բաշխված մթերքները, նույնպես և
արտադրանքի այն մասը, վորը բաշխված է, բայց կուլտեսու-
կանները դեռ չեն ստացել: Հասարակական սննդի համար գոր-
ծածված մթերքները՝ թխած հաց և այլն, նույնպես գրվում են
այս սյունյակում: 18-րդ սյունյակում գրանցել առ 1-ին հունվարի
1934 թ. բոլոր կանխիկ մնացորդները՝ ինչպես կուլտեսության
արտադրանքից մնացածը, նույնպես և դրսից կուլտեսություն
մտած ամեն տեսակի մթերքները, նմանապես և աշխորհրդի հա-

մաձայն կուլտեսականներին բաշխման չենթակա արտադրանքը:
Այս սյունյակի համար տվյալները վերցվում են մթերքների և
նյութերի շարժման հաշվառման գրքից և կուլտեսություն գույքն
ստուգող հանձնաժողովի արձանագրությունից:

Կտվահատի և կանեփի ծղնոտի և թելի համար պետք է նկատի
ունենալ հետևյալը, չեթե կուլտեսությունը հաշվետու տարում
չի կատարել ծղնոտի վերամշակում (թել ստանալու համար), ապա
8, 10, և 17 սյունյակների գումարը պետք է հավասար լինի ընդ-
հանուր արտադրանքին (սյունյակ 6): Յեթե կտվահատի և կա-
նեփի բերքի մի մասը հանձնվել է թելով, ապա 6-րդ սյունյակում
ցույց տրված ծղնոտի ընդհանուր արտադրանքի և 8, 10 և 17
սյունյակների (18 և 19 տողեր) տարբերությունը ցույց է տալու
ծղնոտի այն քանակը, վորը վերամշակված է իրեն կուլտեսու-
թյան կողմից (և վոչ թե գործարանում) և վորից ստացվել է 6-րդ
սյունյակում (20 և 21 տող) ցույց տրված կանեփի և կտվահատի
թելը:

Գրանցված յուրաքանչյուր կուլտուրայի 6-րդ սյունյակի
տվյալները պետք է հավասար լինի 8, 9, 10, 11, 12, 13, 14,
15, 16 և 17-րդ սյունյակների գումարին:

11. ԿԵՆԴՐԱՆՔՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Գրանցվում է մթերքների և նյութերի շարժման հաշվառ-
ման գրքից (ձև № 14), շուկայում ծախված մթերքների հաշվե-
տությունից (ձև № 21) և մթերքների բաշխման ցուցակից
(ձև № 22): «Յենթակա չե հանձնման» սյունյակում (3) ցույց
տալ 1933 թ. պլանը — այն է 15 ամսվա պլանից դուրս չեկած
1932 թ. 4-րդ կվարտալում հանձնած քանակը: Իսկ «Հանձնված
է» սյունյակում (4) ցույց տալ 1933 թվին փաստորեն հանձնե-
վածը: Ձվի հանձնումը ցույց է տրվում հատով:

12. ԴՐԱՄԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐՆ ՈՒ ԾԱԽՔԵՐԸ

Գրանցել դրամարկի հաշվառման գրքի (ձև № 44) և ֆոնդերի
ու վարկերի ծախսման հաշվառման գրքի տվյալներով (ձև № 47)
սկսած 1933 թ. հունվարի 1-ից մինչև 1934 թ. հունվարի 1-ը:
Գումարները դրամական գրքով հաշվելիս նախ նրա մուտքի և

յելքի չուրաքանչյուր հոգւածի դիմաց նշանակել այս աղյուսակի տողերի համարները, ապա ըստ այնմ գումարները դուրս բերել: «Պետութեան վաճառվածից» սլուսյակի մեջ գրանցել միայն կոնտրակտացիայով կամ հարկի կարգով պետութեան տրված արտադրանքի համար ստացված դրամները:

10-րդ տողում «Այլ դրամական մուծումներ» գրանցել կոլտնտեսութեան դրամարկը մուծված բոլոր այլ դրամական մուծքերը, բացի 1-9 սլուսյակներում նախատեսվածներից:

11-րդ սլուսյակում «Ընդամենը բոլոր դրամական մուծքերը» պետք է գրանցվեն նաև հնթացիկ հասարակ հաշիվների մնացորդը Պետքանկում և կոլտնտեսութեան դրամարկի մնացորդն առ 1-ն հունվարի 1934 թ.:

Ծախսերի մասում «Ծախսված է հիմնականները գումարների վրա» 9-րդ սլուսյակում հաշվել նաև մասը հիմնական ծախքերը:

Արտադրական և տնտեսական ծախքերը այս աղյուսակի մեջ չպետք է գրանցվեն:

11-րդ սլուսյակում գրանցել հիմնական շինարարութեան համար բանկից վարկերով ստացված և ընթացիկ տարում ծախսված գումարները:

13. ԿՈՒՆՏԵՆՏՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵԿԱՄՈՒՏԸ ՅԵՎ ՆՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ

Այս կարևորագույն աղյուսակը ցույց է տալիս կոլտնտեսութեան գործնութեան արդյունքները: Դրա գրանցման վրա պետք է հատուկ ուշադրութեամբ զբաղվեն: Բուսաբուծութունից և կենդանաբուծութունից ընթացիկ տարում ստացված ընդհանուր արտադրանքի այն մասը, վորը ծախսված է կոլտնտեսութեան մեջ և այն, ինչ մնում է՝ գնահատվում է պետական մթերոգործանների գներով, իսկ վաճառված և հարկի ու կոնտրակտացիայի դիմաց հանձնած մասը — վաճառքի և հանձնման գներով: Կենդանաբուծութեան ընդհանուր արտադրանքի մեջ են մտնում սույն տարում ռեալիզացիայի յենթարկված բոլոր անասունները (վաճառված, մորթած): Արդյունաբերական ձեռնարկների մեջ հաշվել բոլոր պատրաստած մթերքների, իրերի արժեքը, դուրս չեկած նրանց հումքերի արժեքը (կաթ, հացահատիկ) գումարած

ուրիշի հումքերի վերամշակման համար ստացած և դրսում կատարած աշխատանքից (ինվենտարի ռեմոնտ և այլն), փաստորեն ստացած չեկամուտները: Իր տնտեսութեան մեջ ծախսված և կոլտնտեսականների միջև բաշխված իրերը գնահատվում են պետական գներով, դրսում վաճառվածները՝ այդ ապրանքների փաստացի վաճառքի գներով:

Ստակած անասունների և այրված շենքերի համար ստացված ապահովագրական դրամը, և այլ անպետք գույքի վաճառումից ձեռք բերված գումարները չեկամուտի մեջ չհաշվել: Յեկամուտի մնացած հոգվածներում (9, 13, 18 կետեր) գրել փաստորեն ստացված գումարները: Յեկամուտի բաշխման բաժնում՝ սերմֆոնդի, կերիֆոնդի և ապֆոնդի (24, 26 կետեր) արժեքները հաշվել պետական մթերոգործանների գներով: Ծախսված վառելանյութերի և չուղանյութերի արժեքները վորոշվում են պետական և կոոպերատիվ առևտրական կազմակերպութեանների կողմից բաց թողնելիք գներով: Այս աղյուսակի մնացած ծախքերի հոգվածները գրանցել փաստորեն կատարված ծախքերի համաձայն: 51-րդ սլուսյակում գրանցել չեկամուտի վերջնական բաշխման տվյալներով: Բաշխած մթերքները (հացահատիկ, կարտոֆիլ և այլն) վերածել դրամի — պետական մթերոգործանների գներով: Ըստ աշխուրի բաշխած արտադրանքը (աղյուսակ 10 և 11) բաժանվում է աշխուրի ընդհանուր քանակի վրա (աղյուսակ 4-րդ) և ալսպես ստացվում են մեկ աշխուրի նատուրալ գնահատումների ցուցանիշները (56 և 57 կետեր տվյալ աղյուսակի):

14. ԿՈՒՆՏԵՆՏՆՈՒԹՅԱՆ ԻՆՎԵՆՏԱՐԱՅԻՆ ԲԱՆԱՆՍԸ

Աղյուսակ՝ «Կոլտնտեսութեան ինվենտարային բալանսը» անպայման կազմվում են այն կոլտնտեսութեանները, վորոնք տանում են, կամ 1934 թ. սկզբից տնցնում են հաշվապահութեան կրկնակի սխտեմի:

Կոլտնտեսութեան ֆինանսատնտեսական դրութեան առ 1-ն հունվարի 1934 թ. վորոշվում է կոլտնտեսութեան ամբողջ գույքի և այլ միջոցների ստուգման նյութերի, նրա պարտքերի և ստանալիքների, կազմակերպութեանների և զանազան անձանց հետ

նրա ունեցած հաշիվները հիման վրա և կոտնտեսութեան հաշվալին գրքերի ստորագծած տվյալների հիման վրա: Այդ ստուգումը կատարում են այդ նպատակով ընտրված հատուկ հանձնաժողովը, և կոտնտեսութեան վարչությունը:

Այս բաժնի ձախ կողմը «Գուլջային արժեքների անունը» դրանցելիս, «Դրամարկը», «Արժեքավոր թղթեր», «Փայեր և ակցիաներ» հոգվածների տվյալները, մթերքները և նյութերը, արտադրութեան հիմնական միջոցները, չդորձածվող գույքը, չավարտված շինարարութիւնը և կոտնտեսութեան հասանելիք պարտքերը՝ վերցնել ընթացիկ հաշվի գրքերից և ցուցակներից, վորը ստուգել և ինվինտարիզացիոն հանձնաժողովը, 5-րդ սյունյակում «Սերմեր և անասնակեր» գրանցել տնտեսութեան մեջ առ 1-ն հունվարի 1934 թ. չդորձադրված սերմերն ու կերերը:

11 — 29 սյունյակները դրանցելիս (աղյուսակի ձախ կողմը) տնհրաժեշտ և ինկատի ունենալ հետևյալը՝ առ 1-ն հուն. — 1933 թ. յեղած անասունները չվերադնահառել, այլ ցուլց տալ նրանց այն արժեքը, վորն ունեն առ 1-ն հունվարի 1933 թ. կամ հանրայնացման արձանագրութիւնով: Նույն արձանագրութիւններով եւ վորոշվում են 33 թ. նոր հանրայնացված անասունների արժեքը:

Ձագերի և բարձր խմբեր փոխադրված անասունների գնահատումը կատարվում է պետական մթերման գներով: առանձին դեպքերում ուղղում մտցնել ցեղային կենդանիների նկատմամբ, նրանց բարձր վորակի համար: Դրալց ձեռք բերված անասունները գրանցվում են առքի գներով:

Գյուղատնտեսական նշանակութիւն ունեցող շենքերը, արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկութիւնները, շարժիչները, գյուղ մեքենաները և այլն գրանցվում են առ 1-ն հունվարի 1933 թ. գնահատման համաձայն: Նոր կառուցված շենքերը գնահատվում են պետական նորմաներով:

Մեկիորատիվ կառուցումների (սյունյակ 18), պտղատու և խաղողի այգիների (սյունյակ 19), այլ ծառատունկների (սյունյակ 20), ագրոմեխիորացիայի (սյունյակ 21), նմանապես և չավարտված շինարարութեան (սյունյակ 28) և հետագա տարիների բերքի ամար կատարած աշխատանքների և ծախքերի (սյունյակ 29) արժեքները վորոշվում են նրանց վրա գործադրված զրամական

և նյութական ծախքերով, վորոնք գնահատվում են պետական գներով:

Չի կարելի գուլջը վերագնահատել բարձրացման ուղղութեամբ, յեթե կան մուտքի փաստաթղթերով հիմնավորված արժեքներ (հանրայնացման արձանագրութիւններ, գնման հաշիվներ և այլն) վորովհետև դա տալիս և կոտնտեսութեան միջոցների և ֆոնդերի մասին ազավաղված հասկացողութիւն:

Աղյուսակի աջ մասի «Գուլջային արժեքների գույացման աղբյուրներ» հետևյալ հոգվածները «կոտնտեսութեան պարտքը վերկերի դիմաց», «Ձանազան հիմնարկների և անձանց» և «Նախատակալին մուծումներ և ավանդներ» գրանցել ընթացիկ հաշվառման գիրքն ստուգող հանձնաժողովի կողմից ճշտված տվյալներով: «Հասարակական ֆոնդերի մնացորդը» պետք է հաշվել ֆոնդերի իսկական մնացորդը առ 1-ն հունվարի 1934 թ.: «Փայովճարներ» իսկական մնացորդը առ 1-ն հունվարի 1934 թ. համաձայն (ձև № 1) գրանցել անդամների հաշվառման գրքի համաձայն (ձև № 1) նախապես ստուգելով և մաքրելով նրանց ցուցակը դուրս չեկած անդամներից, վորոնց վերադարձված են փայերը:

13 և 14-րդ սյունյակները՝ «Սերմերի և անասնակերի ֆոնդեր», պետք է ցուլց տալ 1933 թ. յեկամտի բաշխման ժամանակ առանձնացված ֆոնդերի չափը: «Անբաժանելի ֆոնդի» 15-րդ հոգվածը «Հատկացումներ յեկամտներին» գրանցել կոտնտեսութեան տարեկան հաշվետվութեան հիման վրա: 16-րդ հոգվածը «Հանրայնացված գուլջի և մուտքի վճարներ» գրանցել անդամների հաշվառման գրքից: Այստեղ տնհրաժեշտ է հետևել, վորպեսզի վոյ ճիշտ հանրացված և վերադարձված անասունների արժեքը, յեթե այդպիսի դեպք տեղի չե ունեցել, հանել փայովճարներից և հիմնական անբաժանելի ֆոնդերի համապատասխան մասերից, և հիմնարկները 16-րդ տողի մեջ «Հանրացված գուլջ և մուտքի ընդ վորում 16-րդ տողի մեջ «Հանրացված գուլջ և մուտքի վճարներ» չի կարելի մտցնել փայովճարները, վորոնք հաշվի չեն առնվում 12-րդ սյունյակում: 17-րդ հոգվածը «Պետական կոոպերատիվ կուլակային և այլն գուլջ» գրանցել գուլջի ցուցակի և գուլջի ընդունման արձանագրութիւնների հիման վրա:

Այս աղյուսակի ձախ մասի 35-րդ հոգվածի և աջ մասի 20-րդ հոգվածի գումարները պետք է հավասար լինեն միմիանց: Յեթե բոլոր հոգվածների գրանցումից հետո նրանք հավասար չեն, տնհրաժեշտ է ստուգել և ճշտել յերկու մասի բոլոր հոգված

ները: Յեթե կրկնակի ստուգումից հետո վստահություն կա, վոր բոլոր հոգվածները ճիշտ են գրանցված և դարձյալ բալանս չի ստացվում, ապա բալանս ստանալու համար վարվել այսպես՝ յեթե աղյուսակի ձախ մասի 35-րդ հոգվածի (ընդամենը դուշբային արժեքներ) գումարն է ավելի՝ դրանցից հանել աջ մասի 20-րդ հոգվածի (ընդամենը միջոցների գույացման աղբյուրներ) գումարը և տարբերությունը գրել աջ մասի 21-րդ հոգվածում (ինվենտարիզացիայի ժամանակ պարզած ներտնտեսական կուտակումների հաշվետու տարվա ընթացքում), իսկ յեթե աջ մասի 20-րդ հոգվածի գումարն է ավելի, դրանից հանել ձախ մասի 35-րդ հոգվածի գումարը և տարբերությունը գրել ձախ մասի 36-րդ հոգվածում (արժեքների պակասը): Այդպիսով ձախ մասի 37-րդ և աջ մասի 22-րդ հոգվածների գումարները հավասարվում են միմիանց, ստացվում է բալանս: Բալանսի դուրս բերելը պարտադիր է:

Այդ ձևով կազմած հաշվետվությունները ստուգում են կոլտնտեսության նախագահն ու հաշվետարը և հանձնում վերստուգիչ հանձնաժողովին ստուգելու: Վերստուգիչ հանձնաժողովի նախագահի ստորագրումից հետո հաշվետվությունն ուղարկում են ՄՏԿ-ի (յեթե կոլտնտեսությունը սպասարկում է ՄՏԿ-ը) կամ շրջհոգրաժնի փերակացությունը, վորից հետո հաշվետվությունը դրվում է կոլտնտեսության ընդհանուր ժողովի հաստատմանը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Նախքան հաշվետվությունները կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովի, Շրջհոգրաժնի և ՄՏԿ-ին ի հաստատություն մտցնելը, կոլտնտեսության վարչությունը և առաջին հերթին նրա նախագահը պետք է մանրադննդի կերպով ստուգի հաշվետվությունները:

Այս ստուգումը պետք է ապահովի հաշվետվության ճիշտ լինելը:

Կոլտնտեսության նախագահը պետք է հիշի, վոր հաշվետվությունը հանդիսանում է պաշտոնական փաստաթուղթ պետության կողմից կոլտնտեսության աշխատանքները կոնտրոլի չենթարկելու համար և կոլտնտեսության իսկական գրություն:

ամեն տեսակի աղավաղման համար կոլտնտեսության նախագահը և վերստուգիչ հանձնաժողովը պատասխանատու չեն որեւէք առաջ: Անհրաժեշտ է նմանապես թույլ չտալ հաշվետվության մեջ թվաբանական սխալներ: Դրա համար կոլտնտեսության հաշվետարը և Հոգրաժնի կամ ՄՏԿ-ի հրահանգիչը ստուգում են հաշվետվությունները, վոր միայն ըստ ետևության, այլ նաև թվաբանական տեսակետից: Այս դեպքում նրանք պետք է նկատի ունենան հետևյալ հիմնական պահանջները:

Աղյուսակ 3. Կոլտնտեսության հոգային Ֆոնդը յեվ նրա ոգտագործումը:

Սյունյակ 7 «Ընդամենը պիտանի հոգեր» հավասար է 1-6-րդ սյունյակների գումարին: 9-րդ սյունյակի տվյալը հավասար է 7-րդ և 8-րդ սյունյակների գումարին:

Աղյուսակ 4-րդ. Աշխուրհի բիվը քարվա ընթացում ըստ ճյուղերի:

Սունյակ 16 «Ընդամենը հաշված է աշխոր 1933 թ.» հավասար է նրա մեջ մտնող 1-15-րդ սյունյակների գումարին:

Աղյուսակ 5-րդ. ՄՏԿայանի արտադրական սպասարկումը յեվ կոլտնտեսության կատարած աշխատանքները

Յերկու շարքերի թվերի գումարը պետք է ցույց տա կոլտնտեսության մեջ կատարած ամբողջ աշխատանքի ծավալը:

Աղյուսակ 6-րդ. Անասուններ

Առ 1 հունվարի 1933 թ. անասունների վերաբերյալ տվյալները պետք է համապատասխանեն կոլտնտեսության 1932 թ. տարեկան հաշվետվության տվյալներին: Սյունյակ 6 «Ընդամենը ձի» հավասար է աղյուսակի մեջ գտնվող 1-5-րդ սյունյակների գումարին: Սյունյակ 16-րդ «Ընդամենը խոշոր չիղլուրավոր անասուն» հավասար է 8-15 ներառյալ սյունյակների գումարին: Սյունյակ 20 «Ընդամենը վոչխար» հավասար է 17 և 19 սյունյակների գումարին: Սյունյակ 28 «Ընդամենը խոզ» հավասար է 22-27 սյունյակների գումարին:

Կոլտնտեսութեան ֆերմայում անասուններ ունենալու դեպքում, անպայման պետք է ստուգել, թե առաջին աղյուսակի 7-րդ կհառում արդյոք հաշվի չեն առնված այդ ֆերմաները և չեթե չի գրանցված, անհրաժեշտ է գրանցել այդ:

Աղյուսակ 7-րդ. Կոլտնտեսության ունեցած ինվենտարը յեվ աղյուսակ 9-րդ. շենքեր յեվ կառուցումներ

Այս աղյուսակները պետք է գրանցվեն ինվենտարիզացիայի տվյալներով, այսինքն խիստ ստուգված տվյալներով:

Աղյուսակ 8-րդ. Կոլտնտեսականների աճահատական ցանկը և կովով ապահովված լինելը

1, 3, 5, 6, 7, և 9 սյունյակների ցուցանիշները (անհատական ցանք և կով ունեցող կոլտնտեսականների տնտեսությունների թիվը) չպետք է գերազանցեն 2-րդ աղյուսակ «Կոլտնտեսութեան ազգաբնակչությունը» 1-ին սյունյակից «Տնտեսությունների թիվը կոլտնտեսում»:

Աղյուսակ 10-րդ. Բուսաբուծության արտադրանքը յեվ նրա բաշխումը

12-րդ տողը «Ընդամենը հացահատիկ և ընդեղեն» անպայման պետք է հավասար լինի 1—11 տողերի գումարին: Սյունյակ 5-րդ «Փաստորեն քանի հեկտարից բերք է հավաքված» չպետք է գերազանցի սյունյակ 3 «Փաստորեն ցանված է հեկտար» և սյունյակ 4 «1933 թ. համայնացրել են նոր ցանք, նոր անդամները» գումարին: 8—17 սյունյակների գումարը պետք է հավասար լինի 6-րդ սյունյակին:

Աղյուսակ 11-րդ. Կենդանաբուծության արտադրանքի բաշխումը 1933 թ.

Այս աղյուսակում 4, 5, 6, 7, և 8-րդ սյունյակների գումարը պետք է հավասար լինի 2-րդ սյունյակին:

Աղյուսակ 12-րդ. Դրամական մուսքեր յեվ ծախսեր

Աղյուսակը կազմվում է կոլտնտեսութեան հաշվապահական գրքերից քաղվածք անհրաժեշտ միջոցով:

Աղյուսակ 13-րդ. Կոլտնտեսության ընդհանուր յեկամուսը յեվ նրա բաշխումը դրամական արահայտությամբ

Ա. Յեկամատի աղբյուրները. Սյունյակ 6-րդ «Ընդամենը» հավասար է 1—5-րդ սյունյակների գումարին: Սյունյակ 10 «Ընդամենը կենդանաբուծությունից» հավասար է 7—9-րդ սյունյակների գումարին: Սյունյակ 11 «Ընդամենը յեկամուս գյուղատնտեսությունից» պետք է հավասար լինի 6-րդ և 10-րդ սյունյակների գումարին:

Սյունյակ 19-րդ «Ընդամենը յեկամուս բոլոր ճյուղերից» հավասար է 11—18-րդ սյունյակների գումարին:

Բ. Յեկամատի բաշխումը: 27-րդ սյունյակ «Ընդամենը յեկք այդ հողվածներով» հավասար է 20—26-րդ սյունյակների գումարին: 28-րդ սյունյակը «Մնում է յեկամուս» հավասար է 19-րդ սյունյակին «Ընդամենը յեկամուս բոլոր ճյուղերից» հանած 27-րդ սյունյակ «Ընդամենը յեկք այդ հողվածներով»: 42-րդ սյունյակը «Ընդամենը արտադրական ծախքեր» հավասար է 29—41-րդ սյունյակների գումարին: 46-րդ սյունյակը «Ընդամենը վարչա-կառավարչական ծախքեր» հավասար է 43—45-րդ սյունյակների գումարին:

51-րդ սյունյակը «Մնում է բաժանելու անդամներին ըստ աշխոքների» հավասար է 28-րդ սյունյակին «Մնում է յեկամուս» հանած 46-րդ սյունյակը «Ընդամենը վարչա-կառավարչական ծախքեր» հանած 46-րդ սյունյակ «Հատկացված է անբաժանելի ֆոնդին» հանած 49-րդ սյունյակ «Հատկացված է հասարակական ֆոնդին»:

Սյունյակ 52-րդ «Վորից հացահատիկ ուտելի» գումարած սյունյակ 53-րդ «Վորից կարտոֆիլը ուտելի» գումարած սյունյակ 54-րդ «Վորից այլ մթերքներ ուտելի» գումարած սյունյակ 55-րդ «Վորից դրամ» անպայման պետք է հավասար լինի 51-րդ սյունյակին «Մնում է բաժանելու անդամներին ըստ աշխոքների»:

577

Աղյուսակ 14-րդ. Կոլեկցիայի ինվենտարային բաղադր

Բաժին՝ «Գուլջալին արժեքների անուանը» սյունյակ 34-րդ «Ընդամենը պարտք են կոլեկցիային» հավասար է 30, 31, 32, և 33 սյունյակների գումարին:

Սյունյակ 35-րդ «Ընդամենը գուլջալին արժեքներ» հավասար է 1—29 ընդ սյունյակների գումարին — գումարած 34-րդ սյունյակը: Սյունյակ 37-րդ «Բոլոր գուլջալին արժեքները» հավասար է 35 և 36-րդ սյունյակների գումարին:

Սյունյակ 37-րդ «Բոլոր գուլջալին արժեքները» պետք է անպայման հավասար լինի աջ կողմի ստորին սյունյակին «Բոլոր աղբյուրները»:

Բաժին՝ «Գուլջալին արժեքների գոյացման աղբյուրները»

Սյունյակ 4-րդ «Ընդամենը կոլեկցիային պարտքերը» հավասար է աջ բաժնի 1, 2, և 3 սյունյակների գումարին: Սյունյակ 11-րդ «Ընդամենը հասարակական ֆոնդեր» հավասար է 7, 8, 9 և 10-րդ սյունյակների գումարին: Սյունյակ 18-րդ «Ընդամենը անբաժանելի ֆոնդ» հավասար է 15, 16 և 17-րդ սյունյակների գումարին: Սյունյակ 20-րդ «Ընդամենը միջոցների գոյացման աղբյուրները» հավասար է սյունյակ 4 + 6 + 11 + 12 + 13 + 14 + 16 + 19: Սյունյակ «Բոլոր աղբյուրները» հավասար է սյունյակ 20-րդին «Ընդամենը միջոցների գոյացման աղբյուրները» գումարած սյունյակ 21-րդ «Ինվենտարիզացիայի ժամանակ»:



Պատկերաչափական, Գլավկա 6941, Պատկեր 2390, Տիրաժ 3200

657
2-99

ՀՀ Ազգային գրադարան



NL0297330

24.774